[ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ]

Մեծարգո Վեհափառ,

Մի առիթով Ս. Էջմիածնի ատենապետ սրբազան Ն. Պոզապալյանը անձամբ ինձ ասաց, որ Երևանում կկառուցվեն էլի ուրիշ եկեղեցիներ: Սրբազան Գ. Ներսիսյանը դեռ անցած աշնանը առաջարկում էր Զվարթնոցը կառուցել Աբովյան քաղաքում:

Մայրաքաղաք Երևանում Սուրբ Գրիգորը հիմնադրելուց հետո, նույնպիսի հիմնադրումներ եղան Աբովյան քաղաքում և Երևանի Դավիթաշենում: Երկու դեպքում էլ ակնարկ չեղավ, որ այդ երկու հնարավոր տեղերից մեկնումեկում նկատի է ունեցվում Զվարթնոցը:

Իմ մեջ ակամայից այն տպավորությունն է ստեղծվում, որ որոշ շրջաններում հանիրավի խորշում են Զվարթնոցի անունը լսելիս: Եթե այդ այդպես է, ստացվում է, որ ես այլևս առիթ չունեմ Զվարթնոցի նախագծի առավել մանրամասները մշակելու:

Մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին ներկայացնելը՝ Զվարթնոցի ըստ Թորամանյանի վերակազմության իմ ներկայացրած նախագծի գծագրերը կատարված էին մատիտով: Ճարտարապետական խմբին քննության ներկայացնելու համար անհրաժեշտ էր այդպիսիք տուշել, ներկել, այնուհետև հիշյալ խմբի հանձնարարությամբ կատարել լրացուցիչ փոփոխություններ և մշակումներ, որը և իմ կողմից արվել է ժամանակին:

Ստորև բերում եմ կատարված աշխատանքների ցանկը.

<u>Առաջին հերթի աշխատանքները (տուշվել և ներկվել են)</u>՝

1. Տաճարի 1-ին աստիճանի 1-ին հարկի հատակագիծը (1մ x 1մ)
2. Տաճարի 1-ին աստիճանի 2-րդ հարկի հատակագիծը - ,, -
3. Տաճարի 2-րդ աստիճանի հատակագիծը - ,, -
4. Տաճարի 3-րդ աստիճանի հատակագիծը - ,, -
5. Տաճարի արևմտյան ճակատը
6. Տաճարի պայմանական կտրվածք
7. Վերնահարկ բարձրանալու աստիճաններ (լայնական կտրվածք)
8. Վերնահարկ բարձրանալու աստիճաններ (երկայնական կտրվածք)
9. Մեկ խաչաթևի մեծաչափ հատակագիծը
10. Տաճարի արևելյան ճակատի դրվագը

<u>Երկրորդ հերթի աշխատանքներ (վերամշակումներ)</u>

1. Հոգևոր անձնակազմի համար սպասարկող սենյակների հնարավորության ստեղծումը (հատակագծեր, կտրվածք)
2. Շինության տարողության մեծացման տարբերակներ.

Ա տարբերակ – 1800 հոգու տարողությամբ

1-ին հարկի հատակագիծ
Վերնահարկի հատակագիծ
Բ տարբերակ – 2400 հոգու տարողությամբ
1-ին հարկի հատակագիծ
Վերնահարկի հատակագիծ
Գ տարբերակ – 2700 հոգու տարողությամբ
1-ին հարկի հատակագիծ
Վերնահարկի հատակագիծ
Ներքնահարկի հատակագիծ
Նոր կտրվածք

Առաջին հերթի աշխատանքների կատարողը իմ կոմից լիովին վարձատրվել է 1000 ռ. գումարով: Երկրորդ հերթի աշխատանքները կատարել եմ անձամբ, որ պետք է գնահատել ևս 1000 ռ.:

Եթե Ս. Էջմիածինը ինձ հանձնարարի կոնկրետ որևէ տեղի համար շարունակել Զվարթնոցի գծագրերի մշակումը, ապա ես կարող եմ հրաժարվել վերոհիշյալ 2000 ռ. պահանջից:

Մեծարգո Վեհափառ, խնդրում եմ Ձեր որոշումը:

04. 09. 1990 Ճարտարապետ (Տ. Մարության)